Տեղական և տարածաշրջանային
իշխանությունների **կոնգրես**

Նախագահը

Հրավիրում եմ ձեր ուշադրությունը Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման միջոցների հավաքածուի վրա:

Առկա տվյալները վկայում են, որ Եվրոպայում հինգ երեխայից մեկը դառնում է որևէ ձևով կատարվող սեռական բռնության զոհ՝ երեխաների հանդեպ կատարվող բռնության վատագույն ձևերից մեկը:

Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի նպատակն է անդրադառնալ այս խնդրի լուծմանը՝ բարձրացնելով իրազեկվածության աստիճանը և նպաստելով երեխաների, նրանց ընտանիքների/խնամողների, կառավարությունների և տեղական ու տարածաշրջանային իշխանությունների քաղաքականության և ռազմավարության վերազինմանը երեխաներին սեռական բռնությունից և չարաշահումից պաշտպանելու և այն կանխելու համար տրվող գիտելիքների և միջոցների առումով: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, Խորհրդարանական վեհաժողովը և Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը սերտորեն համագործակցում են երեխաների պաշտպանությանը ուղղված օրենսդրության և քաղաքականության մեջ փոփոխություններ իրականացնելու համար:

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պատասխանատվություն են կրում պաշտպանելու և աջակցելու երեխաների և երիտասարդների անվտանգության և բարեկեցության իրականացմանը՝ միասին աշխատելով այնպիսի գործընկերների հետ, ինչպիսին են երրորդ հատվածը, պետական կազմակերպությունները և մասնավոր հատվածը: Եվրոպայի քաղաքներին և տարածաշրջաններին մարտահրավեր է նետված բարձրացնել այս խնդրի նկատմամբ իրազեկվածության աստիճանը, զարգացնել և իրականացնել համայնքային մակարդակում գործողության պլաններ և ռազմավարություններ և ներդրումներ կատարել ավելի որակյալ ծառայություններ մատուցելու համար:

Կոնգրեսը մշակել է Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների մի դաշնագիր, որն առաջարկում է միջոցառումներ և ռազմավարություններ սկսած պարզ, տնտեսապես արդյունավետ նախաձեռնություններից մինչև համապարփակ քաղաքական ծրագրեր, ինչը կարող է նպաստավոր կերպով իրականացվել աջակցելու համար քարոզարշավի նպատակների իրագործմանը: Առաջարկված միջոցառումներից մեկն էլ տեղական և տարածաշրջանային իշխանությունների կողմից երեխայի պաշտպանության բազմապրոֆիլ կենտրոնների հիմնումն է, որոնց օրինակներն արդեն իսկ գոյություն ունեն մի շարք քաղաքներում:

Կոնգրեսը նախապատրաստել է այս միջոցների հավաքածուն, որը պարունակում է տեղական և տարածաշրջանային իշխանությունների, միությունների, ՈԿԿ-ների և այլ շահառուների համար առաջարկություններ, որոնք վերաբերում են բռնությունների կանխարգելման, զոհերի պաշտպանության, ոճրագործների դատական կարգով հետապնդման քաղաքականությանը, ռազմավարություններին և միջոցներին և ողջ գործընթացին երեխաների լիարժեք մասնակցության ապահովմանը: Այս միջոցների հավաքածուն համապարփակ չէ, այլ ավելի շուտ ներածություն է, որը տրամադրում է որոշ օգտակար մտքեր, որոնք կօգնեն երեխաներին զերծ պահել սեռական շահագործումից և բռնությունից:

Ուսումնասիրեք այս միջոցների հավաքածուն՝ իմանալու համար ավելին այն միջոցառումների մասին, որոնք կարող են ձեռնարկվել պայքարելու համար երեխաների հանդեպ սեռական բռնության դեմ և ազատորեն կիսեք այդ տեղեկատվությունը այլոց հետ:

Ես կոչ եմ անում ձեզ ներգրավվել երեխաների սեռական շահագործման և բռնության դեմ մղվող պայքարին՝ առցանց միանալով Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների դաշնագրին www.coe.int/congress-pact վեբկայքում:

Ժան-Կլոդ Ֆրեկոնը

The Congress of Local and Regional Authorities of the Council of Europe / Le Congrès des pouvoirs locaux et régionaux du Conseil de l'Europe
F-67075 Strasbourg Cedex - Tel: +33 (0)3 88 41 21 10 - Fax: +33 (0)3 88 41 37 47 - Email: congress.adm@coe.int - Web: www.coe.int/congress